# Արձանագրություն N 2

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ-ԿՏՏՎ/2022-Լ-20 >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 05. 01. 2023թ.

ՀՀ ոստիկանության կարիքների համար **ջերմային տպիչների** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ-ԿՏՏՎ/2022-Լ-20 ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ-ԿՏՏՎ/2022-Լ-20 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| N | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը | Հայտ ներկայացրած մասնակցի հասցեն, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆՆԵՐ ՍՊԸ | York Mills Rd. 3rd Floor Toronto, ON M2P 0A2 հեռ. +18007692555 |
| 2 | Էյչ Գրուպ ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30 հեռ. +37491404073 |
| 3 | ԻՆՏԵԼԻՋԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 19 հեռ. +37460830088 |

Մասնակիցների ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

**«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «ԻՆՏԵԼԻՋԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

**«ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆՆԵՐ» ՍՊԸ**-ի կողմից չի ներկայացվել Հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետով պահանջվող հայտի ապահովումը, այն է՝ 7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 2) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է **գնման գնի հինգ տոկոսին**:

**Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի ե/կետը,** այն է՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում, որի չափը հավասար է **գնման գնի** հինգ տոկոսին: Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի հինգ տոկոսին: Գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում **բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովումը ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ պայմանով, որ դրա բնօրինակը մասնակիցը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ…:**

Մասնակիցների առաջարկված գները՝

## ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | ԿԱՐԱԳՅՈՁՅԱՆՆԵՐ ՍՊԸ | 41868960 AMD | 60000000 AMD | 0 % | 60000000 AMD | 1500000 AMD | 0 % | 1500000.00 AMD |
| 1 | 2 | Էյչ Գրուպ ՍՊԸ | 41868960 AMD | 35700000 AMD | 20 % | 42840000 AMD | 26166000 AMD | 20 % | 31399200.00 AMD |
| 1 | 3 | ԻՆՏԵԼԻՋԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ | 41868960 AMD | 33333333.34 AMD | 20 % | 40000000 AMD | 26500000 AMD | 20 % | 31800000.00 AMD |

Համաձայն **ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը**, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան...:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ-ԿՏՏՎ/2022-Լ-20 ծածկագրով ընթացակարգը համարվում է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն:

Համաձայն **ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի ե/կետի՝** գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում հայտի ապահովումները մյուս մասնակիցներին վերադարձվում է անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**Ընդունվեց որոշում՝ կողմ 2, դեմ 0:**

**Հանձնաժողովի Նախագահ՝**

ոստիկանության փոխգնդապետ — Ա. Թամազյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

ոստիկանության փոխգնդապետ — Մ. Բաբայան

ոստիկանության մայոր — Շ. Հարությունյան

**Քարտուղար՝**

ՀՀ ՔԿԾ 1-ին դասի առաջատար ծառայող — Լ. Սահակյան